



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւնս վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 16

ԱՂՈՐԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ վիս, ով Աստուած, քեզի ապաւինած եմ:
Դուն ես Տէրս, քեզմէ վար ուրախութիւնն չունիմ:
Ինչ փառահեղ են երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:
Տէր, դուն ես իմ ժառնագութիւնս, ինձի վիճակուած բաժինը,
եւ իմ բաժինս դուն պիտի տաս ինձի:
Ինձի ելած վիճակը ինչ հաճելի է ինձի,
իրաւամբ շնորհք մը՝ որ վիս խնդութեամբ կը լեցնէ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ վիս,
նոյնիսկ գիշերը վիս կը խրատէ խղճմտանիքս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ վիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի, որովհետեւ գիտեմ թէ վիս
մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւնս տեսնէ:
Կեանքի ճամբան ցոյց կու տաս ինձի. ներկայութիւնդ վիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

3:18-22

ՔՐԻՍՏՈՍԻ ԷՋԸԸ ԴԺՈՆՔ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ (3:18-22)

Պետրոս Առաքեալ անդրադարձաւ, թէ ինչպէս կարելի է պատասխան փառք բերել անոնց, որոնք կ'ուզեն զիսկալ մեր յոյսի մասին:

1. Մեր սրտերուն մէջ ըլլայ Քրիստոսի ներկայութիւնը, որպէսզի կարենանք միշտ պատրաստ ըլլանք հեգուծեամբ եւ երկիւղածութեամբ պատասխան փառք բերել յոյսի մասին:
2. Մեր հաւատարմութեան մէջ Քրիստոսի նկատմամբ որպէս մեր Տէրը, մեր հրամանատարը: Ինչպէս որ էր հարիւրապետը, ասոր կ'ըսեմ զնա, կ'երթայ, երկուր, եւ կու գայ:
3. Արթուն եւ պատրաստ ըլլալ, պատրաստակամ:
4. Ուշադրութեամբ ստովելու եւ պատրաստուելու մեր յոյսի մասին: Ինչո՞ւ պէտք է հարցնեն մեր յոյսի մասին, որովհետեւ պիտի փեսնեն, որ մեր կեանքովը յոյսը կը ներշնչենք, անյոյս ընկերութեան մէջ:
5. Այս բոլորը ընելու հեգուծեան եւ երկիւղածութեամբ, երբոր կ'ապրինք մեր քրիստոնէական հաւատքը հեգուծեամբ եւ երկիւղածութեամբ:

Ահա այս բոլոր բարիքները վայելելէ յետոյ, մեզի կը մնայ մաս եւ բաժին հանելու նաեւ անոնց, որոնք փակաւին խաւարին մէջ են, որպէսզի Լոյսը փեսնեն եւ Լոյսին գան ու փրկուին:

Շարունակելով իր միտքը չարչարանքի հետ կապուած, այս անգամ Պետրոս Առաքեալ կ'անդրադառնայ Քրիստոսի չարչարանքներուն, Անոր խաչելութեան, թաղման ու յարութեան, իբրեւ օրինակ մեզի: Եթէ երբէք Քրիստոսի մահն ու յարութիւնը մեր միակ յոյսն է, նաեւ պէտք է ի մտի ունենանք ու հասկնանք Անոր կրած չարչարանքներուն բնոյթը: Մանաւանդ երբ Պետրոս Առաքեալ կը ներկայացնէ թէ Քրիստոսի չարչարանքները մէկ անգամուան համար եղան, բայց վասն մեր մեղաց, արդար՝ մեղաւորներու համար, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ: Առաւել եւս մեզի առիթ փառք հասկնալու մեր կրած նեղութիւններն ու ցաւերը, որպէս Իրեն հետեւորդներ: Այսպէս Պետրոս Առաքեալ Քրիստոսի չարչարանքները իբրեւ օրինակ կ'օգտագործէ, որ այդ չարչարանքները որուն արժանի չէր Քրիստոս չարչարուելու, միւս կողմէ, սակայն, նաեւ Աստուծոյ կամքն էր չարչարուիլ, անով մեզ Աստուծոյ մօտեցնելու, այսինքն՝ փրկագործական ծրագրի մասին է խօսքը: Որովհետեւ յաճախ կրնանք չհասկնալ թէ ինչու կը չարչարուինք: Անոր համար ալ ԵԿեղեցոյ պատմութիւնը երբ կը կարդանք եւ այնպէս նշուած դէպքերուն կ'անդրադառնանք, ապա կը փեսնենք թէ ինչպիսի չարչարանքներու ենթարկուած են հաւատարմութեամբ: Անոր համար ալ Պետրոս Առաքեալ հաւատարմութեամբ ուղղութիւնը դէպի Քրիստոս կ'ուղղէ ըսելով. նայեցէք Քրիստոսի ու Անոր կրած չարչարանքներուն:

1. Քրիստոսի կրած չարչարանքները, որուն արժանի չէր: Բայց Ան կրեց այդ չարչարանքները մեզի համար (Ա Պետր 2:21): Եւ եթէ երբէք անարդար չարչարանք կրեց, այդ ալ մինչեւ մահ: Այս մասին կ'անդրադառնան Աւետարանիչները եւս: Օրինակ, Յովհաննէս (18:28-38) «Ի՞նչ բանով կ'ամբաստանէք այս մարդը» (29 հմր): «Եթէ այս մարդը չարագործ չըլլար՝ քեզի չէինք յանձնել զայն» (30 հմր): Ղուկ 23:41 «Մենք արժանի ենք մեր պարիժին», «Իրապէս որ այս մարդը արդար էր» հարիւրապետը պիտի ըսէր (Ղուկ 23:47): «Մեզ գործեցի արդար մէկը մարմնելու համար» Յուդա պիտի ըսէր (Մարթ 27:4): Անարդարօրէն, ուրիշին համար: Ո՛վ է այդ ուրիշը: Մեղաւորը: Այսինքն՝ մենք: Այդ իսկ է իմաստը խաչին, ոչ թէ պարզապէս զարդարանք մը մեր կուրծքերը զարդարելու կամ մեր փունի պատերը:
2. Այս չարչարանքները մէկ անգամուան համար: Ինչո՞ւ մէկ անգամուան համար: Որովհետեւ ընդհանրապէս հրեաները ունէին սովորութիւնը որ քահանաները զոհ կ'ընծայէին փառարկին քանի մը փարբեր առիթներով, իսկ ամէն փարի քաւութեան օր Քահանայապետը: (Համմտելու էր 9:25-28): Եւ ահա որքան շնորհակալութեամբ Աստուծոյ կը դիմենք, որ Քրիստոս մեր փոխարէն չարչարուեցաւ, բայց այսքանը բաւարար չէ, որովհետեւ նաեւ սկնակալութեամբ կը սպասենք Անոր վերադարձը յաղթական: Այս ձեռով

Քրիստոս ուրիշ բան չըրաւ եթէ ոչ Հօր Աստուծոյ կամքը կատարեց, իր մարմնին անկրկնելի գոհագործումովը մեզ մեր մեղքերէն սրբուելու համար (Եբր 10:10):

3. Այդ չարչարանքը նպատակով էր որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ: Այն պահուն որ Քրիստոս խաչուեցաւ Տաճարին վարագոյրը երկուքի բաժնուեցաւ, որպէսզի մեղաւորը մօտենայ Աստուծոյ: Այսօր նոյն հրաւեր կոչը կայ մեզմէ իւրաքանչիւրին, մենք ամէն Կիրակի ո՛ր կ'երթանք, Եկեղեցի կամ Աստուծոյ մօտենալու:

«**Թեպէտ մեռաւ մարմնով**» (18 հմբ): Պետրոս Առաքեալ յարակօրէն ցոյց կու տայ թէ Քրիստոսի մահը մարմնով էր, եւ ոչ այնպէս ինչպէս շարեր կը կարծէին, ինչ որ աղանդաւորական շարժումներ յառաջ եկած էին այդ ուղղութեամբ: Անմիջապէս Առաքեալը կը շարունակէ ըսելով, «**բայց կենդանի մնաց հոգիով**» (18 հմբ), որ արդէն կը նշանակէ, Քրիստոսի մահը պարսպութիւն չէր, այլ յաղթանակ էր տարուած մահուան վրայ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Արոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ ապրողներուն եւ թէ ննջեցեալներուն հաւասարապէս» (Հռոմ 14:9): «Քրիստոս ինքն ալ անոնց նման եղաւ, հաղորդակից՝ անոնց մարդկութեան, որպէսզի իր մահով ոչնչացնէ Սաքանան, որ մահուան իշխանութիւնը ունէր, եւ ազատագրէ անոնք՝ որոնք իրենց ամբողջ կեանքը մահուան վախովը կ'անցնէին, սպրուկներու պէս» (Եբր 2:14):